




**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹՅԱՆ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ՀԻՄՆՄԱՆ
40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՀԲԸՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՂՆ,
ՈՐ Ի ՄԱՆ ՊԱՌԻՈ, ԲՐԱԶԻԼԻԱ**

Միաժամանակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրինութիւնն ենք յղում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Բրազիլիայի մասնաճիւղի անդամներին, հիմնադիրներին ու նրա գործունեութեանը իրենց աջակցութիւնը բերած մեր ժողովրդի բոլոր զաւակներին եւ շնորհատրում մասնաճիւղի 40-ամեայ յոբելեանի առիթով:

Մեր յիշողութեան մէջ փակաւին թարմ են այն փպաւորութիւնները, որ ստացել ենք Բրազիլիոյ հայոց թեմ կապարած Մեր Հայրապետական այցելութեան ընթացքին, որոնց մէջ նաեւ՝ ՀԲԸՄ Բրազիլիայի մասնաճիւղի կողմից կազմակերպուած սիրալիւր ընդունելութեան ջերմ յուշերը: Մենք ականաւորես եղանք մասնաճիւղի 40-ամեայ գործունեութեան արդիւնքներին, բայց մանաւանդ՝ ազգասէր ու եկեղեցասէր ոգուն, որով գործում է մասնաճիւղը իր հիմնադրութեան օրերից:

Մեր գնահատանքն ենք բերում, որ յոբելեանական այս հանգրուանին դուք հաւաքուել էք արժեւորելու Մասնաճիւղի վաստակը Բրազիլիայի հայոց կեանքում՝ հայ համայնքի համախմբման, ազգային-եկեղեցական կեանքի զօրացման նուիրական գործում, հաւաքուել էք մեծարելու անձանց, որոնց ծառայանութր ջանքերով քայլ առ քայլ ուղենշուել է բարեգործութեան օրինեալ ճանապարհը Մասնաճիւղի:

Մեզ համար մխիթարական է, որ ՀԲԸՄ Բրազիլիայի Մասնաճիւղը հոգում է, որ յարկապես երիտասարդութիւնը մասնակից լինի ազգային կեանքին, եւ ինչպէս աշխարհի շարք երկրներում Բարեգործականի մասնաճիւղերը, նախանձախնդրօրէն կազմակերպում է ամենօրեայ հայկական վարժարանի գործունեութիւնը, որպէսզի ոսկեղէնիկ մեր մայրենին շարունակի հնչել մեր գաւակների շուրթերին եւ հասակ առնելով մեր պայքարութեան ու մշակոյթի իմացութեամբ՝ նրանք փերերը լինեն նախնեաց սրբութիւնների ու ժառանգութեան, լինեն արժանատր գաւակները մեր Եկեղեցու:

Հաւատում ենք, որ մասնաճիւղի յոբելեանը քաջակերութեան ու ոգեշնչումի առիթ պիտի դառնայ Բրազիլիայի հայոց կեանքում, զօրացնելով մասնաճիւղի անդամներիդ՝ շարունակելու ձեր անձնուէր առաքելութիւնը նոյն անսակարկ նուիրումով ու հոգաւարութեամբ՝ ի սէր ազգի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ի խնդիր համայն մեր ժողովրդի միացեալ ու պայծառ գալիքի:

Իջման Սուրբ Մեղանի առջեւ Մեր աղօթքն ու հայցն է, որ Տէրը խաղաղութեան ու օրինութեան մէջ պահպանի աշխարհը համայն, միշտ բարօր ու բարգաւաճ՝ Բրազիլիան եւ Բրազիլիայի հայոց թեմը:

Թող Աստուած պահի եւ պահպանի Ձեզ ամենքիդ՝ շնորհելով ազգաշահ ու եկեղեցանպաստ ձեռքբերումներով լեցուն քաջատոգջ կեանքի արդիւնալից փարիներ եւ առաքինի գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Լոյսիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեալս. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա Գիրս Օրհնութեան ի 11-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 500